ՆՐԱ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր խոսքը Սուրբ Հոգու ձայնի և Նրա ներկայության մասին է: Անցած մի քանի կիրակի օրերին մենք խոսել ենք ամպի, քամու և կրակի մասին, իսկ այսօր՝ Նրա ձայնի մասին: Տեր Հիսուսն ասաց. «Իմ գառները լսում են իմ ձայնը, ես ճանաչում եմ նրանց, և նրանք հետևում են ինձ»: Լսո՞ւմ եք այսօր ձեր մեջ Սուրբ Հոգու ձայնը: Ինչպիսի՞ն է Նա և ո՞րն է Նրա նպատակը:

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. 3 ԹԱԳ. 19:1-21

1 Աքաաբը Հեզաբելին պատմեց այն բոլորը, ինչ արել էր Եղիան, և թե ինչպես էր նա սրով սպանել բոլոր մարգարեներին: 2 Եւ Հեզաբէլը պատգամավոր ուղարկեց Եղիայի մօտ ասելով. Աստուածները այսպէս անեն եւ սորանից էլ աւելի անեն, եթէ որ վաղը այս ժամին քո անձը նորանցից մէկի անձի տեղ չդնեմ:

3 Եւ այս <u>բանը</u> <u>տեսնելով</u> վեր կացավ գնաց իր անձը ազատելու համար, եւ հասաւ Հուդայի Բերսաբէէն. Եւ իր ծառային թողեց այնտեղ: 4 Բայց ինքը մէկ օրվա ճանապարհ գնաց անապատում եւ եկաւ մի գիհիի տակ նստեց եւ սրտանց ***ուզեց որ մեռնի*** *եւ ասեց. Արդէն բավական է, ով Տէր, իմ հոգին առ. Որովհետեւ ես իմ հայրերիցը լաւ չեմ:*

5 Եւ պառկեց եւ քնեց մի գիհիի տակ. Եւ ահա մի հրեշտակ նորան դիպաւ եւ ասեց նորան. Վեր կաց կեր: 6 Եւ Եղիան նայեց եւ ահա նորա գլխի կողմում մի քարի վրա թխած նկանակ եւ մի կուժ ջուր. Եւ նա կերաւ եւ խմեց, եւ դարձեալ քնեց: 7 Եւ Տիրոջ հրեշտակը դարձեալ եկաւ եւ նորան դիպաւ եւ ասեց. Վեր կաց կեր, որովհետեւ ճանապարհդ շատ երկար պիտի լինի քեզ համար: 8 Եւ նա վեր կացաւ եւ կերաւ ու խմեց եւ այն կերակուրի զօրությունով գնաց քառասուն օր եւ քառասուն գիշեր մինչեւ Աստուծո Քորեբ սարը:

> *Հակ. 5:17 - Եղիան մարդ էր մեզ պէս՝ կրքի ենթակա. Եւ ջերմեռանդ աղօթք արաւ որ անձրեւ չ'գայ, եւ անձրեւ չ'եկաւ երկրի վերայ երեք տարի եւ վեց ամիս:*

I. ԻՆՉ ՁԱՅՆԵՐ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ ՁԵՐ ՄՏՔՈՎ:

2 Եւ Հեզաբէլը պատգամավոր ուղարկեց Եղիայի մօտ ասելով.

3 Եւ այս <u>բանը</u> <u>տեսնելով</u> վեր կացաւ գնաց իր անձը ազատելու համար,

- ***Կարդացեք Սաղմոս 29***

Հով. 10:27 – Իմ գառները լսում են իմ ձայնը, ես ճանաչում եմ նրանց, և նրանք հետևում են ինձ

II. ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է ԻՐ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱՀԻ:

Ա Թագ. 3:10 – Եվ Սամուելն ասաց. Խոսի՛ր, Տե՛ր, որովհետև քո ծառան լսում է:

*9 Եւ այնտեղ մտաւ մի քարայրի **ՄԵՋ** եւ այնտեղ օթեւանեց (առանձին սենյակ), եւ ահա Տիրոջ խօսքն եղաւ իրան եւ նորան ասեց.*

Ի՞նչ ունես այստեղ, Եղիա:

- *Որտե՞ղ ես Ադամ: (Ծննդոց 3:1-13)*
- *Որտե՞ղ է քո եղբայրը, Կայեն: (Ծննդոց 4:1-9)*
- *Ի՞նչ է դա քո ձեռքում, Մովսես: (Ելից 4:1-4)*
- *Ի՞նչ է քո անունը, Հակոբ: (Ծննդոց 32:22-32)*
- *Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում. ո՞վ եմ ես: (Մարկոս 8:27)*
- *Ուզո՞ւմ ես առողջանալ: (Հովհաննես 5:1-9)*
- *Ինչո՞ւ ես լաց լինում: (Հովհաննես 20:11-18)*
- *Հասկանո՞ւմ ես, թե ես ինչ եմ արել քեզ համար: (Հովհաննես 13)*

- ***Պողոսը գիտեր Աստծո խոսքը, բայց երբեք չէր լսել նրա ձայնը:***

Գործք Առաքելոց 9:4-5 – Գետնին ընկնելով՝ նա մի ձայն լսեց, որ իրեն ասում էր. Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես ինձ հալածում: Նա ասաց. Ո՞վ ես, Տե՛ր: Ասաց. Ես Հիսուսն եմ, որին դու հալածում ես:

11 Եվ նա ասաց. Դո՛ւրս եկ և սարի վրա կանգնի՛ր Տիրոջ առջև:

*Եվ ահա Տերը անց էր կենում. Եւ մի մեծ եւ զօրաւոր **հողմ** պատառեց սարերը եւ կոտրատեց ապառաժները Տիրոջ առաջին. Բայց Տէրն այն հողմի մէջ չէր: Եւ հողմից հետո **երկրաշարժ** եղաւ, բայց Տէրը երկրաշարժի մէջ չէր: 12 Եւ երկրաշարժից հետո **կրակ**, բայց Տէրը կրակի մէջ չէր. **Եւ կրակից հետո մի մեղմ ու բարակ ձայն:***

- ***Հիսուսն Իր աշակերտներին տարավ մի հանգիստ վայր, որը կոչվում էր Այլակերպության լեռ, որպեսզի նրանք կարողանան հանգիստ գտնել:***

*13 Եւ եղաւ երբոր Եղիան լսեց այն, իր երեսը ծածկեց իր վերարկուով եւ **ԴՈՒՐՍ ԵԿԱՎ** ու կանգնեց քարայրի դռանը, եւ ահա մի **ձայն** եկաւ նորան եւ ասեց.*

Այստեղ ի՞նչ ունես, Եղիա: ***(Paul's story of escape, my story of quitting the pills).***

III. ԱՍՏԾՈ ՁԱՅՆԸ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է:

- ***Կյանքի քաոսի մեջ Աստված խոսում է մեզ հետ:***

  Ծննդոց 3:10-11 – Նա պատասխանեց. Պարտեզում <u>քո ձայնը լսեցի</u> և վախեցա, որովհետև մերկ էի, և թաքնվեցի: Եվ Աստված ասաց. <u>Ո՞վ ասաց քեզ</u>, թե դու մերկ ես. արդյոք կերա՞ր այն ծառից, որից պատվիրել էի քեզ, որ չուտես:

- ***Այսօր . . . ԵԹԵ կլսես Նրա ձայնը***

  Եբրայեցիներին 3:7-8 – Դրա համար Սուրբ Հոգին այսպես է ասում. Այսօր եթե նրա ձայնը լսեք, ձեր սրտերը մի՛ կարծրացրեք...

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: